

ԲԱՆԱՑԱՑՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սամսոն Կարապետի Բարայան – ծնվել է 1900թ., Շամշադինի շրջանի Ղուլախ (Այգևանոր) գյուղում, գյուղացու ընտանիքում: Կրթությունը, ինչպես ինքը ներկայացրեց, թերի միջնակարգ: Հին բոլշևիկ է, մասնակցել է Սայիսյան ապստամբությանը: 1924թ. սկսած Շամշադինի շրջանի պետական ապարատում վարել է տարրեր պատուններ, եղել է ՓՕԿ-ի նախագահ, կուսկազմակերպության քարտուղար, կոլյոնտեսության նախագահ, գյուղատնտեսության նախագահ, գյուղատնտեսության նախագահ, ԽՍՀՄ մքերումների մինիստրության շրջանային լիազոր: 1961թ. անցել է բռչակի: Բանասացին Բերդում անվանում են սուակախտս, և այդ կոչումը նա լիուլին արդարացնում է: Նա զիտի բազմաթիվ խրատական գրույցներ, հեքիտրներ, տվյանդություններ և հուշապատումներ: 1962թ. բանասացից հեքիաթներ է գրառել ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինսահիտուտի բանահտվաք Արագ Կարապետյանը, որոնք տպագրվել են «Հայ ժողովրդական հեքիտրների» VI հատորում: Բանասացը լավ հիշողություն ուներ և նախորդ պատմածներից ոչ մի նյութ չկրկնեց: Լիճերով ուշիմ և զրուցաներ մարդ՝ նա մտապահել է տարրեր ժամանակներում լսածները և առիթ ներկայանալու դեպքում հաճույքով պատմում է: Նրա պատմածները բանահյուսական մեծ արժեք են ներկայացնում:

Տիգրան Լ-նի Բարայան – ծնվել է 1926թ. հոկտեմբերին, Շամշադինի շրջանի Դրդի (Արծվարերդ) գյուղում, գյուղացու բնտեսներում: Հայրը եղել է կարմիր պարտիգան: Ունի յորեանյա կրթություն: 1943թ. տեղափոխված է Բերդ և սկսում է աշխատել նախ որպես ծիապան, սպա՝ կոշկակար, իրշեց խմբի անդամ, 1957թ. աշխատում է սուստրի ցանցում¹: Չինարի գյուղում կոշկակար աշխատելու տարիներին ի հայտ է գալիք նրա պատմելու ծիրքը, և նա ամեն երեկո պարտադիր մի հեքիաթ պատմում:

¹ Այստեղ և ենտայսու եանդիպող ներկա ժամանակի դրսերումները պայմանավորված են այն բանով, որ ժողովածուն կազմվել է 1986թ. և այդ պահին բանասացներից շատերը դեռևս ողջ են եղել (ծանօթ կազմողի):

Բանտսացի մանկությունն անցել է բանականական ավանդություններ ունեցող ընտանիքում: Նրա հայրը, մայրը, պապը՝ Ալեքսան Պետրոսյանը, ու մոր քեռին՝ Ավակիմ Հովհաննիմյանը, վարպետ բանասացներ էին, որոնք հատկապես ծմբան ամիսներին հավաքում և պատմում էին բազմաթիվ գրույցներ, հեքիաթներ և այլ պատմություններ: Բանտսացը խորին երկուուղածությամբ է հիշում նաև իր հոգևոր հորն ու ուսուցչին՝ վասպուրականցի բրուտ Արշակ Ռաջոյանին: «Զմեռը կյալիս էր մուտքերս նստըմ, լսվավ հեքիաթներ էր պատմըմ, մենք էլ լսըմ էինք, դե ջահել էինք, ինքն էլ, լեզուն քաղցր էր, պատմըմ էր, մենք կլանվուծ սոյմ էինք: Դե կամտց-կամաց մինք էլ սովորել ենք»:

Տիգրան Բարայանն օժտված բանասաց է, պատմում է մեծ ոգեսրությամբ: Նրա բանականական երկացանկը խիստ բազմազան է. այն բնոգրկում է խաղիկներ, աղոթքներ, հաներուկներ, առած-ասացվածքներ, երգիր, ստեր, գրույցներ, հեքիաթներ: Բանասացը պատմել սկսել է 1950թ., որսիս կանոն թե՛ աշխատավայրում, թե՛ տաճը նա միշտ շրջապահաված է լինում ունկնդիրների բազմությամբ, որոնց տարիքային ընդգրկումը մեծ է՝ սկսած բանասացի բոռնիկներից, վերջացրած տարեց մարդկանցով: Բանտսացն իր երկացանկի պատմել կազմող «Խազօղու հեքիաթը» լսել է պայալց՝ Ալեքսան Պետրոսյանից, իսկ «Արա Գեղեցիկ» հեքիաթը՝ վտապուրակտների Արշակ Ռաջոյանից, որը հեքիաթը նրան փոխանցել է հեակյալ խոսքերով: «Տիգրան ջան, տու շնորքով տղա ես, քեզ մի հեքիաթ կպատմեմ, որ տու հիմնական հիշես»:

Արրահամ Հովհաննեսի Գրիգորյան – ծնվել է 1900թ. Բիթլիսի նահանգի Նաբային գյուղում, գյուղացու բնտանիքում: Ծառ դառնություններ է աեսել ու աարել, իր մաշկի վրա գգացել է եղեռնի բոլոր սարսահներն ու գաղթի տառապանքները: Բանասացն իր կենսագրությունը պատմեց ինչպես վիապար: Երեք անգամ մորքվելուց փրկվելուց հետո, մոր հեա փախել է: Հորեղորայրը Վանում

նրան հանձնել է որբանոց, որի հետ 1916թ. հայտնվել է Դիլջանում, այնուհետև մազապործ Սինաս եղասյրը նրան տարել է մաելան հոգեվարքի մեջ բայտացող Էջմիածին, որտեղ կենդանի մնալը հսկագոր էր հերոսության: Բժիշկներ Սանդինյանի ու Թախտաջանի օգնությամբ նա աշխատանք է ստանում և հսկում իրավում: Այսպես երկար կարելի է թվարկել նրա վյանքը պահանության մանրամասները, և ինչպես բանասացն ինքն է դիպուկ բնորոշել. «Տափուշ կետը ինձ պատի քանաք ըլի, Կարմիր յալն էլ թուխտ, որ իմ կյանքը տեղափորի: Ե՛, ինչիր եմ տեսել, քար էր ընել իմ տեղը չեր դիմանալը»:

Արրահամ Գրիգորյանը շնորհալի հերիաթասաց էր: Նրա պատումները ողողված էին լուսավոր լսվասեառությամբ ու եավստով, նրա հերոսները բազում դժվարություններ հաղթահարելով՝ բարի գործը ավարտին էին եասցնում, ինչպես բանասացն ինքը: Նա սիրված հերիաթասաց էր և Բերդի ծերունիների հավաքատեղիի բանտսացների առաջնորդը: Աբրահամ Գրիգորյանն իր բազմտշարչար մաեկանացուն կնքեց 1984թ.:

Հայկանոց Յականի Դիլանյան – ծնվել է 1901թ. Չամշարինի շրջանի Նորաշեն գյուղում, գյուղացու ընտանիքում: Ծնված օրվանից նա ճաշակել է որրուհու դառը ճակատագիրը, խորք մոր եալսծանքները: Նա դառնութքամբ ասաց. «Չե՛, անգրագետ եմ, խորք մեր ա ըեւ, ըշկոլ չի տվել, քե մատադ կըլիիս տվել ա՝ նստղրել, ուսիս տվել ա՝ կըդնըցրել»:

Աշխատել է կոլտնտեսությունում, այժմ թոշակառու է: Բանասացը աշխույժ ու կենսալին կին է, զիսի բազմաթիվ խաղիկներ, եանելուկներ, հերիաթներ, որոնք սովորի է իր տատից ու պասից:

Ենգիբար Հարությունի Երիցյան – ծնվել է 1903թ. Չամշարինի շրջանի Ղրդի (Արծվաբերդ) գյուղում: Կիսագրագետ է, սովորել է գյուղի ծխակտն դպրոցում: Աշխատել է կոլտնտեսությունում: Մեծ ընտանիք է ունեցել՝ եինզ տղա և չորս տղջիկ, որոնք այժմ գյուղում չեն ապրում: Ստանակցել է Հայենական պատերազմին, որի ընթացքում աշտարակցի Սուխայել Սանուկյանից սովորել է «Հաջի Մստրադ» հերիաթը: Գիտի բազմաթիվ եեղիաթներ և ալխանություն իրենց «Երիցյան-Բլուլյան» տոնեմի մասին: Չատ զգացմունքային բանասաց էր, պատմելու ընթացքում

հերքիարի հերոսի վիճակից ելնելով՝ հաճախ հուզվում էր և արտասվում:

Անուշ Կարապետի Մաճկալյան (Դարբինյան) – ծնվել է 1891թ. Չամշարինի շրջանի Թուվուգ գյուղում: Գրող Մաթևոս Դարբինյանի քույրն է: Մայրական սլապք՝ Գարեգին Մուրադյանը, հոգևորական է եղել: Թե ինքը և թե քույրերը՝ Վարսենիկ, Ցուլիկ և Լուսյա Դարբինյանները, ինուտ բանասացներ են: Վերին ասահճանի խոսքաշատ և բանինաց անձնավորություն է, գյուղական կենցաղի, բառուրանի, սովորույթների «Փայլող հանրագիտարան»: Եղել է նաև Ռոմանոս Մելքյանի բանասացը (նրա հիշողությունները Ու. Մելքյանի մասին պաեւում է Ե. Խեմչյանի ֆոնդում FEI:5235-5243 համարի տակ):

Ա. Մաճկալյանը գրագետ է, 38 տարի աշխատել է կոլտնտեսությունում որպես շերամապահ և գորգագործ: Այժմ էլ առանց ակնոցի գորգ է գործում: Ամեն ինչ նրան եւտաքրքրել է և շարունակում է հետաքրքրել: Սիրում է համայնքել անցյալն ու ներկան և եզրակացություններ տնել, ու դեպ, զերապատվությունը տախս է ներկային: «Ես իշխանության ամեն պանին էլ հավան եմ, մենակ էս մի պանին հավան չեմ, որ պլժտմավում են»: Գայիքը ընկալելու և զնաեատելու մի յուրօրինակ դրվագ է հետևյալը. Անուշ տաաիկը խանություն տուեատուր անելուց ենտու առտնց վճարելու դուրս է գտիս, ապա վերադառնում և լուս կանգնած վաճառողին ասում է. «Այ մարդ, զիորմ ե՞ս, ես էս խի եմ քյնըմ, ես մեծ եմ, ես կոմունիզմին երսնի չղեմ, իմ վայ կոմունիզմը մեի եմ անըմ»:

Իր իմացած բազմաթիվ երգերը, խաղիկները, հանելուկները, զրույցները, տոածասացվածքները, սովորույթներն ու ծեսերը նա սիրով փոխանցում է մատադ սերնին՝ եավատարիմ մնալով այն սկզբունքին, որը բնորոշում է տյապես «Են մարքն ա մարք, որ իրան զիորությունը թող անի մնա, աանի ոչ հոդի տակն ածի»:

Կուպի Գալուստի Պապյան – ծնվել է 1901թ. Չամշարինի շրջանի Բերդ գյուղում, չքավոր գյուղացու ընաանիքում: Բանասաց Արսեն Պապյանի կրտսեր եղբայրն է: Սինչ խորհրդային կարգերի հստատումը բարակություն է արել եարուստների տներում, այնուհետև ատաղճագործություն է սովորել: Կոլտնտեսությունում աշխատել է որպես

ատադագործ և սղոցավար: Մասնակցել է Հայրենական պատերտօնին, Վիրավորվել է, երկրորդ կարգի հաշմանդաւում է:

Բանասացը զիսի բազմարիվ հայերեն և աղքաբաներեն երգեր, սիրավեպեր, զրույցներ, զվարճախոսություններ, «Ջոռ-Օղլի» էպոսը: Սիրված երգասաց է եղել և երգերը կատարել է սազի նվազակցությամբ: Մասնակցել է ժողովրդական երգերի կատարողների հանրապետական մրցույթների:


L-ու Պետրոսի Վիրաբյան – ծնվել է 1904թ. Շամշադինի շրջանի Բերդ գյուղում, զյուղացու ընտանիքում: Երեք տարեկանում որբացել է և մնացել տատի խնամքին, որից էլ սովորել է ավանդություններն ու զրույցները: Տասնուր տարեկանում ամուսնացել է, ունեցել է երեք երեխա, կնոջ մահից հետո նորից ամուսնացել է մի կնոջ հետ, որն առաջին ամուսնուց ուներ չորս երեխա, միասին էլ ունեցել են վեց երեխա, և Լ.Վիրաբյանը դեկավարել է ասսներեք երեխայից բաղկացած գերիսստանը: Գրագիտություն սովորել է

30-ական թվականներին՝ լիկայանուս: Աշխատել է կոլտնտեսությունում, գրադպել է հոդագործությամբ, 23 տարի եղել է բրիգադիր. վերջին տարիներին տշխատում է որպես հտնդապաե: Մասնակցել է Հայրենական պատերազմին, վիրավորվել է և վերադարձել: Սիրված բանասաց է, պատմում է հին կենցաղը ներկայացնող եետարրիր հուշապատումներ, գրույցներ, ավանդություններ:


Նախորդական Վարդապետ (Մելյան)

– ծնվել է 1893թ. Շամշադինի շրջանի Վերին Կարմիրաղբյուր գյուղում: 13 տարեկանում ամուսնացել է, տեղափոխվել Բերդ, այժմ էլ կենդանի է: Ունեցել է տասը երեխա. «Տասը անքամ մտքափոխություն եմ քաշել»:

Բանասացն անգրագետ է: Ծառ լավ եիշողություն ունի, պատմում է հեքիաթներ, գրույցներ, որոնք սովորել է ամուսնուց, զիսի սովորույթներ, ծեսեր, իաղիկներ, առած-ասացվածքներ, եկեղեցական ու ժողովրդական առներ: 90-ամյա բանասացը շարունակում էր վարել տնաետությունը և գործ էր գործում:




Բանասաց՝ Տիգրան Բաբայան,
Արծվաբերդ




Բանասաց՝ Լևոն Վիրաբյան,
Քերոն





Բանասաց՝ Կոստի Պապյան, Բերդ



Բանասաց՝ Արսեն Պապյան,
Բերդ



Բանասաց՝ Վարսենիկ Միսկարյան
Վարագավան






Բանահավաք՝ Էսթեր Խեմչյան
Բանասաց՝ Ժիրայր Խարազյան
1986թ. Նոր Վարագավաճք



Բանասաց՝ Արրահամ Գրիգորյան,

Քերու





Բանասաց՝ Անոշ Մաճկալյան,
Թռվուզ

Հայոց գյուղական պատմութեան
հարաբերութեան պատմութեան





Բանասաց՝ Սամսոն Բարյայն,
Այգեծոր



Բանասաց՝ Նեգիբար Երիցյան,
Արծվարերդ




Բանասացմեր՝ Հայկի և Վարդանուշ Պապյաններ,
Քերդ

3



Թովուզեցի Ավագ պապը և Գեղեց տատը,
Թովուզ



Բանասաց՝ Հայկանոց Դիլանյան,
Նորաշեն



Բանասաց՝ Արամ Միսկարյան,
Վարագավան



Բանասաց Լուսիկ Միսկարյան
Վարագավան





Բանասաց՝ Հակոբ Սառիկյան,
Այգեձոր



Բանասաց՝ Նատա Քոսակյան,
Բերդ